


ՄՓՅՈՒՌՔԸ ԿԱՊԻ ՄԵՁ Է

ԱՌՅԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ ՄՓՅՈՒՐՔԱՇԱՅ ՈՒՍՈՒՑԻԳՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Այսօր աշխարհում կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարը շարունակվում է: Մարդկությունը շարունակում է իր համար անընդհատ ընտրել պայքարի նոր վարքագիծ, նոր կանոններ կիրառել, այս բարդ իրավիճակից դուրս գալու ելքեր փնտրել: Այս ամենից, ցավոք, անմասն չմնացին սփյուռքահայ ուսուցիչները: Շատերն արդեն հայրենիքում վերապատրաստում անցնելու հայտադիմումներն էին լրացրել, փափագում էին Մայր Հայաստանում հանդիպել աշխարհասփյուռ գործընկերներին, տեսնել բարեկամներին, ևս մեկ անգամ վայելել հայրենի ջերմությունն ու սերը: Մակայն կարծես ավանդույթ դարձած հանդիպումը այս տարի փոխարինվեց առցանց տիրույթում հանդիպման: Ոչինչ, սա էլ կանցնի, կգան լավ օրեր, հայրենիքում հանդիպումը այս անգամ կհետաձգվեք...



անգամ: Այս բաց դասընթացները կնպաստեն հայրենագիտական առարկաներից ուսուցիչների գիտելիքների և հմտությունների բարելավմանը, մասնագիտական աճին և փորձառությանը: Առաջին առցանց դասին մասնակցում էին 50-ից ավելի ուսուցիչներ սփյուռքից և Հայաստանից: Այն վարում էր մանկավարժ, պատմաբան



Աշոտ Ղուկասյանը: Դասախոսությունը նվիրված էր հայկական լեռնաշխարհին և նրա բնական հրաշալիքներին:

Դասախոսությունների առաջին շարքը նախատեսվում է 15 թեմա (30 դասաժամ): Նախապես գրանցված և դասախոսությունների ամբողջական շարքին մասնակցած, ինչպես նաև դասընթացից հետո առաջադրանքներ կատարած ուսուցիչներին տրամադրվելու է համապատասխան վկայական «Էդիտ Պրինտ» հրատարակչության և ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից:

Բացի բուն դասախոսությունից կայքէջը պարունակելու է լրացուցիչ տեղեկություններ ներկայացված թեմաների վերաբերյալ, որոնք կարող են մեթոդական օժանդակ նյութ հանդիսանալ ուսուցիչների համար:

Արմինե ՀՈՎՍԵՓՅԱՆ



ՓՐԿՈՒԹՅԱՆ ԻՄ ԱՓԸ

Տարև Մաղաքյանը ծնվել է Վանաձորում, ավարտել է Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտը: Հեղինակել է «Միժեռակները վերադարձել են», «Երկված արահետներ», «Հայր և հայր», «Դրախտի խնձորը», «Փրկության իմ ավի» բազմաժանր ժողովածուները: Երաժիշտական գործունեությունները տպագրվել են Հայաստանի, սփյուռքի, Արցախի թերթերում և ամսագրերում, արժանացել է բազմաթիվ պատվոգրերի ու շնորհակալագրերի:



*Պատահում է սիրող լցվում
Ու չի կարծի ժամանակին,
Անկր անձրև է խոտտանում
Ու չի տալիս ժամանակին,
Շտապում է, կամ ուշանում:
Ու այդպես էլ գլխի չընկանք,
Թե մեր ուզած ժամանակը
Երբ է գալիս ժամանակին:*

Համր Մահյան

«Ու այդպես էլ գլխի չընկավ Տարև Մաղաքյանը, թե ինչու մի պատահական օր, մեկն է գրիչը վերցրեց, ու տողերը կարծես իրենք իրենց սկսեցին հոսել սպիտակ թղթի վրայով: Պատահում է և այսպես, որովհետև ոչ մեկին տրված չէ իմանալ, թե երբ է արարելու ինչպե՞ս ժամանակը: Եվ մեկ բան անհայտ է. ոչինչ պատահական չէ, պարզապես ի վերուստ շնորհված ստեղծագործելու, արարելու ձիրքը, տաղանդը, որ տարիներ շարունակ լուռ էր, առանց տարիք ու ժամանակ հարցնելու, անսպասելի ակտեց խոսել...»

հունչ ու ներդաշնակ, նաև՝ առանց ավելորդաբանությունների: Ընթերցողին անչափ հարագատ է Տարևի արվեստը, քանզի յուրաքանչյուր նոր կարող է իրեն տեսնել նրա պատումներում: Հրաշալի կերպով զգալի և վերաբարձրող դիմացինի ապրումները ցանկացած իրողության մեջ, ըմբռնելու քննության անվերժանելի հմայքն ու փոխկապակցվել խոսքին այնպես, որ համապատասխան տրամադրություն ձևավորվի և խանդաղատանը շարադրվածի հանդեպ, հմտորեն շարադրել իր հոգու պրիզմայով անցկացված անելիքը և այն որպես գեղարվեստական խոսք, տրամադրել ընթերցողներին սա է Տարևի առաքելությունը: Հետաքրքրական իրապատումներ վերցրած կյանքի բոլոր ոլորտներից, կիրթ ու գրավիչ ձևակերպումներ, հոգեմեծ համեմատություններ, տեսանկյունի, զգայական արտահայտչամիջոցներ, գունագեղ, համով-հոտով խոսք, և վերջապես, հրաշալի տրամադրության ապահովում ու հաջողը ստեղծագործության անհամբեր սպասում՝ այսպիսին է Տարև Մաղաքյանի արվեստը հոգի ջերմացնող, անեղծ ու անկեղծ, հույզեր արթնացնող, ոսկեղենիկ մայրենիով շարադրված ու անչափ սիրելի: Ժամանակի շուկա տեղին և պատեհ կերպով ընթերցողի հոգուն միահյուսող և հանրությանը կյանքի ոլորտում մշտապես կենսափոխելու պահող անհատ այսպիսին է մեր ժամանակակից Տարև Մաղաքյանը:

ՀԱՄԱՏ

Նա երկար քայլեց, հանդիպող ամեն խաչքարի առջև կանգնեց խաչակնքեց, իսկ տուն գնալու ճանապարհին ինքն իրեն հարցերով տանջեց, բայց այդպես էլ չհասկացավ, խաչքարն է սուրբ, թե հավատը:

Հասավ տուն, բայց իր տուն մտնելու փոխարեն հարևանի տուն մտավ, հարևանն էլ ինչպես միշտ կոնյակի շիշը դրեց սեղանին ու ինքը գիշերը անցկացրեց գլուխը հարևանի սեղանին դրած...»

Առավոտյան մի կերպ արթնացավ, ինքն իրեն համոզեց, որ այլևս չի մտնելու հարևանի տուն ու դուրս եկավ, աշխատանքից ուշացել էր, ուռած դեմքով, կարմրած աչքերով աշխատանքի գնալ չուզեց, մտավ իր տուն, պատկեց անկողնում ու սկսեց արտասվել, արցունքները թրջում էին բարձր... Դուրը թակեցին, դառն ու տախիպ արցունքները կուլ տալով դուրը բացեց...

— Ինչու ե՞ս եկել, եկել ես, որ ի՞նչ, — ասաց ու քայլեց դեպի հյուրասենյակ: — Եկել եմ, որ մենակությունը կիսեմ, —

ասաց հյուրն ու միջանցքում սկսեց հանել կոշիկները:

...Նստեցին բազմոցին, ինքը շատ էր ուզում գրկել աղջկան ու ասել, որ սիրում է, ասել, որ առանց նրա օրերը չեն անցնում, չեն դառնում պատմություն: Ասել, որ առանց նրա օրերը անցնում են, գորովում, բայց չեն դառնում հիշողություն, չկարողացավ ու գլուխը երկու ձեռքերով բռնեց, մատներով սկսեց խոռոչի մագերթը, տորթել դեմքը ու երագել, որ մի օր էլ իր մագերթն այդպես կխառնի նա, ով հիմա նստած էր իրենից մի քանի քայլ հեռու ու լուռ մի կետի էր նայում:

— Ես հիմա սուս կեփեմ, քո աչքերից երևում է, որ լավ չես քնել, կամ էլ ամբողջ գիշեր...

— Գալուդ նպատակը չեմ հասկանում, Անուշ, — կոպիտ ասաց ինքը, արդեն խոհանոց գնացող աղջկա հետևից:

— Դու ինձ կհասկանաս միայն Ամերիկայում, — խոհանոցից բղավեց աղջիկը:

— Ես քո ամերիկայները չեմ սիրում, Անուշ, մենք այդ մասին արդեն խոսել ենք, — խոհանոց մտնելով խոսեց ինքը:

— Ի՞նչ պիտի անես այս երկրում Սրապ, ի՞նչ...ամեն օր մի երկու կոպեկի համար պիտի գնաս աշխատես, որ աշխատանք օրական մի հացի չեղարկի, որ աշխատավարձդ մյուս աշխատավարձիդ երեսը չտեսնի:

— Բավական է, Անուշ, գնա, իզուր էլ եկել ես, մենք իրար հետ ինչ ունենիք արդեն կիսել ենք, իմ տվածը քեզ մի մատանի էր, հետ ես տվել, էլ ի՞նչ ես եկել, էլ ի՞նչ ես ուզում, գնա էլի, — բարկացավ Սրապն ու դարձյալ գնաց հյուրասենյակ, մի քանի րոպե անց լսվեց Անուշի հեռացող քայլերի ձայնը...

— Հավատը Սրապ, իհարկե հավատը, խաչքարը մարդու ձեռքի գործ է, հավատն է նրան արբանում:

— Հա, դու ճիշտ ես, ապրես... Անուշ, ես, ...Անուշ, իմ Մեծ կապ Սուրբ Մաղաթելը, Էրզրից չհեռացավ, իր տան շեմքին խոտովվեց, իմ պապ Սուրբ Մարային կախեցին մեր տան առջև վեր բարձրացող բարդու ծառին, իմ հավատափոխ եղած հերը դարձի եկավ ու վերադարձավ հայրենիք, իսկ ես հիմա փախել եմ Հայրենիքից ինչ է թե հացիս հետ պանիր պիտի ուտեմ, դու ինձ ների Անուշ, բայց արյունը ջուր չի դառնում, ես վերադառնում եմ...

— Դու չես կարող վերադառնալ, իսկ ես Սրապ, դու իմ մասին մտածել է ս:

— Դու կամուսնանաս, երեխաներ կունենաս ու երջանիկ կլինես, որովհետև դու դա կարող ես, իսկ իմ երջանկությունը իմ Հայրենիքն է:

— Գնա, — չոր նետեց Անուշն ու լացակումած դուրս եկավ հյուրասենյակից:

...— Որդիներս կանչեցին, բերեցին լավ կլինես, բայց ես չկարողացա հարմարվել, ինքն իմ գյուղն է: Հարսս ասում է, հայրիկ սա քո առանձին լոգարանն է, բայց ես ուզում եմ գյուղի իմ տաշտը, թոռներս ասում են, պապի քեզ համար կին գտնեք ամուսնացիր, բայց ես իմ պատավի զերբեմանին եմ ուզում մոռ վառեմ, խունկ ծխեմ...

— Ես մեռնում էի այստեղ, պապի, — ասաց Սրապը ինքնաթիռում կողքին նստած ծեր հայրենակցին:

...Նա երկար քայլեց, հանդիպող ամեն խաչքարի առջև կանգնեց խաչակնքեց, իսկ տուն գնալու ճանապարհին ինքն իրեն հարցերով տանջեց, բայց այդպես էլ չհասկացավ, խաչքարն է սուրբ, թե հավատը:

Հասավ տուն, բայց իր տուն մտնելու փոխարեն հարևանի տուն մտավ, հարևանն էլ ինչպես միշտ կոնյակի շիշը դրեց սեղանին ու ինքը գիշերը անցկացրեց գլուխը հարևանի սեղանին դրած...»

Առավոտյան մի կերպ արթնացավ, ինքն իրեն համոզեց, որ այլևս չի մտնելու հարևանի տուն ու դուրս եկավ, աշխատանքից ուշացել էր, ուռած դեմքով, կարմրած աչքերով աշխատանքի գնալ չուզեց, մտավ իր տուն, պատկեց անկողնում ու սկսեց արտասվել, արցունքները թրջում էին բարձր... Դուրը թակեցին, դառն ու տախիպ արցունքները կուլ տալով դուրը բացեց...

— Դու : — Ես մտածեցի, որ մեր երեխան պիտի հայրենիքում մեծանա, Սրապ...

— Մուրթ Մաղաթելի ծուխը չպիտի մարի, Անուշ, — ասաց Սրապն ու դռների մեջ գրկեց հայրենիք վերադարձած կնոջը:

Տարև ՄԱԳՔՅԱՆ